ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/30

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցում, թվային ռադիոգրաֆիայի թվային ռենտգենոսկոպիայի ռենտգեն համալիրի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 20.02.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 21.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

27.02.2020թ.-ին և 20.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

27.02.2020թ.-ին Բողոքի քննությունն ավարտվել է և որոշման հրապարակման օր է նշանակվել 20.03.2020թ.-ին:

2. «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 20.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2020 թվականի փետրվարի 14 ին «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01 ծածկագրով գնանշման հարցման հրավեր: Հրավերով ւսահմանվում է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը (21.02.2020թ.) ժամը 11:00-ին:

Հրավերով սահմանվում է, որ հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Այրվածքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց

(այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիության չունեցող անձ լինելու հանգամանքից:

Հրավերով պահանջվող սարքավորումների տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության և բավականին մեծ թվով ռենտգեն սարքավորումների արտադրողների հետ այդ բնութագրերի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ 1-ին չափաբաժնով պահանջվող Թվային ռադիոգրաֆիայի և ռենտգենոսկոպիայի ռենտգեն համալիրի տեխնիկական բնութագիրը կազմված է թերի, և այս բնութագրերով սարքավորում մատակարարելն անհնար է: Մասնավորապես, սարքավորման անվանումից պարզ է դառնում, որ Պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել ռենտգեն համալիր, որն ունի նաև ռենտգենսկոպիական հետազոտություններ անցկացնելու հնարավորություն, այնինչ ամբողջ տեխնիկական բնութագրերը գրված են միայն ռենտգենոգրաֆիական հետազոտություններին բավարարող սարքի համար: Այսպես. օրինակ, սարքի տեխ.բնութագրերում նկարագրված է «Պատկերի ուղղահայաց կանգնակ» կոչվող մասը, որը ռենտգենոսկոպիկ հնարավորությամբ համակարգերի դեպքում չի օգտագործվում: Սարքի գեներատորի տեխնիկական բնութագրերում նույնպես նշված չեն ռենտգենոսկոպիկ հետազոտությունների համար անհրաժեշտ տվյալներ, ինչպես օրինակ գեներատորի հզորությունը սկոպիայի դեպքում, հաճախականությունը սկոպիայի դեպքում և այլն:

Ինչ վերաբերում է երկրորդ չափաբաժնին՝ Անխափան Սնուցման Աղբյուրին, հրավերից բխում է, որ անխափան սնուցման աղբյուրը նախատեսվում է ռենտգեն համալիրի հւսմար, իսկ մինչև պարզ չդառնա, թե ինչ հզորությամբ և ինչ պարամետրերով ռենտգեն համալիր է ձեռք բերվելու, անխափան սնուցման սարքի ձեռքբերումն ուղղակի անիմաստ է: Այսպես, օրինակ, նույնիսկ այս թերի բնութագրերով նշվւսծ 50կՎտ հզորությամբ ռենտգեն համալիրի համար 120կՎԱ հզորության անխափան սնուցման սարքը անիմաստ է նմանատիպ սարքին կբավարարի նույնիսկ 60-80կՎԱ հզորության անխափան սնուցման աղբյուրը:

Բացի վերոնշյալից, փաստենք նաև, որ հրավերը կազմված է ՀՀ Գնումների գործընթացը կարգավորող իրավական նորմերի խախտմամբ: Մասնավորապես՝

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության առ 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշման (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 14541, ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ) 11-րդ կետի՝

11) 34-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:»:

Ընկերությունը ներկայացված լրացումներով հավելյալ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի փետրվարի 20-ին Ար.Մեդտեխնիկա ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է բողոք Այրվածքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության կողմից հայտարարված ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01 գնանշման հարցման վերաբերյալ: Քանի որ բողոքը ներկայացվել էր հայտերի բացման նիստի նախորդ օրը, ներկայացված հայտերն ամեն դեպքում հասանելի են դարձել PPCM համակարգում: Փաստացի, մրցույթին մասնակցել են երկու մասնակից, երկուսն էլ ներկայացրել են առաջարկներ Nanjing Perlove Medical Equipment Co., Ltd ընկերության կողմից արտադրված սարքերի համար իրենց հայտում նշելով սակայն, որ արտադրող հանդիսանում է Perlong Medical ընկերությունը: Ըստ այդմ, մենք, որպես Nanjing Perlove Medical Equipment Co., Ltd-ի բազմամյա գործընկեր, դիմել ենք արտադրողին հասկանալու համար արդյոք տեխնիկական անհամապատասխանություններ չկան ներկայացված հայտերի մոդելների մեջ: Ստացված պատասխանը կցում ենք այս դիրքորոշմանը: Փաստացի, արտադրողը հաստատում է, որ ներկայացված տեխնիկական առաջադրանքին համապատասխանող որևէ մոդել իր կողմից չի արտադրվում: Ուստի, պնդում ենք, որ նույնիսկ եթե բողոքի քննության արդյունքում որոշվի, որ Պատվիրատուն պիտի շարունակի ընթացակարգը, պարտադրել

առանձնահատուկ ուշադրություն դարձնել ներկայացված առաջարկների համապատասխանությանը մրցույթի պահանջներին:»:

«ԳԲՔԱ-ԼՕ-2020/30 բողոքի նիստը դիտելուց հետո, ցանկանում ենք հավելյալ դիրքորոշմամբ տեղեկացնել, որ Ար. Մեդտեխնիկա ՍՊ ընկերությունը միտում չուներ պնդելու, որ Գնման առարկայի բնութագրերը սահմանված են մեկ մասնակցի կամ արտադրողի համար:

Բողոքի պահանջն էր չեղյալ հայտարարել ընթացակարգը, քանի որ բնութագրերը կազմված են թերի:

Հրավերի փաթեթը ստանալուն պես՝ մենք անգլերեն թարգմանությամբ տեխնիկական բնութագրերը ուղարկել ենք մեր գործընկերներ Perlove Medical Ընկերությանը, որից ստացել ենք պատասխան, որ իր արտադրության որևէ մոդել չի համապատասխանում հայտարարկած բնութագրերին, ինչի հետևանքով մրցույթին հայտ չենք ներկայացրել:

Քանի որ մասնակիցների հայտերը հասանելի են ppcm համակարգով, պարզ դարձավ, որ երկու կազմակերպություններն էլ մրցույթին մասնակցել են նույն Ընկերության արտադրանք հանդիսացող տարբեր մոդելներով: Արդյունքները տեսնելուն պես Ար.Մեդտեխնիկա ՍՊ ընկերությունը կրկնակի ուղարկել է տեխնիկական տվյալները և մասնակիցների կողմից առաջակվող մոդելները Perlove Medical ընկերությանը (որը նաև հանդիսանում է Perlong Medical ընկերության մատակարարը) և ստացել է պատասխան, որ ներյակացված մոդելները նույնպես չեն համապատասխանում պահանջվող տեխնիկական բնութագրերին: Ստացված նամակը կցված էր նախորդ դիրքորոշմանը:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ խնդրել է պարտավորեցնել «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. <u>«Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.02.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/2460-2020 գրությամբ դիմել է «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու),

հնարավորություն տալով «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստերին, 26.02.2020թ.-ին թիվ ԱԱԿ-63 գրությամբ ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020թ փետրվարի 21-ի գրության, կապված «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2020թ ներկայացված բողոքի հետ՝ հայտնում ենք, որ ԱՆ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (կցվում է) ներկայացված է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Տեխնիկական բնութագիրը (կցվում է) կազմվել է նեղ մասնագետի կողմից, ինչն էլ հանգեցրել է որոշակի պարամետրային խեղաթյուրումների:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից թվային ռադիոգրաֆիայի թվային ռենտգենոսկոպիայի ռենտգեն համալիրի ձեռքբերման նպատակով 14.02.2020թ.-ին հայտարարվել է «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am և www.armeps.am կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2020թ.-ի ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու

համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը.

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից թվային ռադիոգրաֆիայի թվային ռենտգենոսկոպիայի ռենտգեն համալիրի ձեռքբերման նպատակով 14.02.2020թ.-ին հայտարարված «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հրավերը պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am և www.armeps.am կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» գնանշման հարցման ընթացակարգը հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ քարտուղարը գնման ընթացակարգի հրավերի տեքստը՝ նաև ռուսերեն լեզվով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով պետք է հրապարակեր տեղեկագրում, սակայն հրապարակել է միայն հայերեն լեզվով:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով

մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ Պատվիրատուի 26.02.2020թ.-ին թիվ ԱԱԿ-63 գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացված այն պնդմանը, որ ԱՆ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (կցվում է) ներկայացված է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, և արձանագրում, որ գրությանը կից ներկայացված է միայն Տեխնիկական բնութագիրը հայերեն և թերի (ոչ ամբողջական) ռուսերեն թարգմանությամբ, իսկ հրավերի ռուսերեն տարբերակը կցված չէ, և ինչպես վերը նշվեց, ընթացակարգի հրավերը պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am և www.armeps.am, կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովը «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելով գործել է ոչ իրավաչափ, խախտելով Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/30 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին թվային ռադիոգրաֆիայի թվային ռենտգենոսկոպիայի ռենտգեն համալիրի ձեռքբերման նպատակով 14.02.2020թ.-ին հայտարարված «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ